



անհնում ենք որ մեր հարուստները նուիրում են մեծ գումարով զանազան իրերդէնները ամեն նախընտրելի գերականական մանկավարժներին, փառաշունչները նրանց, երբ նոքա կազմում են մեր դպրոցներին համար հարուստ մանկավարժական և բնագիտական թանգարանները,— և մի և նոյն ժամանակ առաջարկում ենք, որ ընտրվէին անուշներ մեր ուսումնարաններին մէջ՝ հասարակութեան այն դասի մարդիկ, որք ոչինչ ունեւ չունեն, ուրեմն չեն էլ կարողանայ գործ դնել ոչ մեր թանգարանները ոչ ուղղութիւն տալ վարժարաններին, ուրեմն ապարդիւն պիտի լինին թէ մեր բոլոր ջանքեր, թէ բարեբանների նուիրատուութիւնները... առաջարկում են ընտրել հոգեւորական դասից անուշներ, ուրեմն այն դասի մարդիկ, որք չեն իրանք կարող են տարրական դաստիարակութեան, և որոնց ներկայ սերունդի վրա մենք հրաժարվում ենք մտաւորապէս ներգործելու, բայց պէտք է պատրաստենք հոգեւորականների աւելի կրթված նոր սերունդը:

Թող յիշի հասարակութիւնը «Մշակ» լրագրի երկու տարվայ ընթացքի բովանդակութիւնը, թող անգամ մոռանայ խմբագրութեանց դուրս եկած բողոքները հոգեւորական դասի դէմ, ինչպէս «Վիզլական բաժնայ», «Հոգեւորականութիւն և ժողովուրդ», «Ո՞ր է եկեղեցու պաշտպան», և այլն սրա նման յոգեվածներ,— այլ թող յիշի միայն այն բազմաթիւ բողոքներ, որք գաւառներից ուղարկված, մեր լրագրի էջերի մէջ տպվեցան, և որք ժողովրդի արտունայն արտայայտութիւն են հոգեւորական դասի տգիտութեան դէմ: Թող ստեն որ «Մշակ» լրագրի առաջնորդող յղումները մի մարդի կամ խմբի անձնական կարծիքի արտայայտութիւն է,— բայց հասարակութեան արտունայն անդադար յայտնվող տպագրութեան միջոցով, ծածկել չէ կարելի:

Եթէ մենք աշխարհականներս չը մասնակցենք հոգեւորականների նոր և աւելի լուսաւորված սերունդի պատրաստութեան մէջ,— մեր պարտաւորութիւնը կատարած չենք լինի և կը դատապարտվենք ապագայ սերունդի բերանից:

Թող չը մոռանան մեր հոգեւորականները որ եկեղեցին ժողովրդի անկեղծ սեփականութիւնն է, և մենք էլ այնքան իրաւունք ունենք ծառայել մեր եկեղեցուն, որքան և դուք հոգեւորականները:

Խնդրում ենք որ չը մոռանան մեր հոգեւորականները թէ հայ ժողովրդի սերը դէպի հագեւորականները միայն նուազվել է, իսկ նրա սերը դէպի եկեղեցին մնում է նոյն ջերմ, տաք, եռանդոտ, մենք կասենք մինչև անգամ՝ մոլեռանդ սերը:

բանդ չկաւ, տորոնտէրները ծարահատաւ սկսեցին իրենց ապրանքը «Նիժնի տոնովաձա» առնոցը ծանադարհել, յուսալով այնտեղ ծախել Մալիստինի տան վրայ, վերջը իրենք էլ այնտեղ հաւաքուելով խնդրեցին նրան (Մալիստին) որ առնէ, բայց նա չկամեալով միանգամայն տորոնտէրների սերտը կտորել, թուլութեամբ անցկացրեց, չյայտնելով իւր միտքը ոչ որք: Վերջը երբ նա պատասխանեց որ նա այս տարի տորոնտէր հարկաւորութիւն չունի, այն ժամանակ մեր խնդը տորոնտէրները յուսալաւոր սկսեցին դէտու դէն ընկնել բանկերի դիմել և փութն 4 մանէթով գրաւ դնել, փողը փոխ առնել, որից էլ Ռուսաստանի բարեխիղճ բնակիչները զանազան ծախքեր դուրս գալով, փութին տալիսն 3 մանէթ 50 կոպ...:

Մեր վաճառականներին անկարելի էր այլապէս վարուել, այսինքն գրաւ չ'դնել, որով հետեւ նրաք ամէնը պարտքերի մէջ խրուած, պէտք էր մի կերպ ազատուէին պարտքից, բայց ինչ էր պատճառը որ տորոնտէրից այս պիտի կարճ ժամանակամիջոցում մինչև այս աստիճան իջաւ: Մի կողմից արհեստական ալիւզարինը (alizarin) և միւս կողմից Ռուսաստանի հարուստ վաճառականի հարստահալութիւնը հասցրին տորոնտէր այս անախտանքի դրութեան: Ալիւզարինի անուշը թէպէտ մենք վաղուց լսած էինք, բայց դա համարում էինք իբրեւ լոկ երեւակայութիւն և շատ հասարակ բան, որովհետեւ մենք մեր միաժողովեան մէջ երեւակայում էինք որ ալիւզարինով ներկած ապրանքի գոյնը քնում է և կ'զնայ (!), ուրեմն էլ պէտք չէ դա, բայց մեր այս պարզ երեւակայութեան սարսափելի հետեւանքն այն եղաւ, որ այս տարի ալիւզարինը ոչ թէ միայն նշանակութիւն ստացաւ Ռուսաստանում, այլ և գործ ածուեց այնտեղի գործարաններում էլ, գործարանատէրերի մեծ մասը սկսեցին իրենց ներքը անել ալիւզարինով... արա առաջը առնելու համար, ինչպէս լսում ենք, տեղս և Վարսեմուդում կազմվում են խնդրեցներ, որոնք առանձին առանձին պիտի զրկուին Վոլկասու Փոխարքային, որ նա Վոյսերի մօտ բարեխիղճ լինի այս մասին՝ կամ արգելիլ արտատահանից ներս բերել արհեստական ալիւզարինը և կամ աւելացնել ալիւզարինի մաքսը մինչև այն աստիճան, որ տորոնտէր 7, 8 մանէթով մատուցի լինի Ռուսաստանի վաճառականներին (Ֆարսիկանտներին): Նշանակութիւն կունենայ արդեօք այս խնդիրը, յայտնի չէ, սակայն շատ ցանկալի կը լինէր, որ այս մասին մի անօրէնութիւն անուէր...:

Ղուբայ. նոյեմբ. 23.

Ալաք

ՀԱՅՈՑ ՔԱՏՐՈՆ

I

Ինչ է՞ հարկաւոր որ թատրոնը իրագործվի մեզանում:

Հատ մեծ բան չըսուր ժողովրդի համար և ընդհակառակն չնչին բան թիֆլիսի հարուստ հայ-հասարակութեան (վաճառականների և փողատէրերի) համար: Հարկաւոր է փող...:

Ս. Պոլսի մէջ, որտեղից հայ ժողովուրդը մի և նոյն զրութեան մէջն է համարեայ և գուցէ որտեղ ազգային լուսաւորութիւնը ենթարկված է աւելի ծանր պայմանների շրջապայ ազգութիւնների ազդեցութեան պատճառով,— այդտեղից հայ ժողովուրդը, որի նիւթական ոյժը թիֆլիսի հայ-հարուստներին համամատ, շատ նուազ է, Ս. Պոլսի հայ-հասարակութիւնը ունի բազմաթիւ լրագրներ, զանազան երկսեռ ուսումնարաններ և կանոնաւորված թատրոններ:

Ս. Պոլսի հայ-հասարակութիւնը ներկայումս ունի երեք թէ չորս թատրոն, որոց մէջ կանոնաւոր ձևով տալիս են համարեայ

ամեն օր (թատրոնական սեզոնի ընթացքում) հայերէն ներկայացումներ:

Ս. Պոլսում, ինչպէս և թիֆլիսի մէջ, թատրոնը իր ծնունդը առել է զանազան միատեղիական, առասպելական և ազգասիրական նիւթերից: Վերջում ներկայացնում էին Շուշանիկը, Արշակի և այլ սորա նման պիէտսները: Ինչպէս և մեր մէջ հաւաքվել են զանազան երիտասարդներ, տեղ են «խաղանք»,— և խաղացել են... Հանաքը դարձել է իրողութիւն, զբաղմունք՝ պարագայունք:

Թատրոնի գոյութեան սկզբներում Ս. Պոլսի էֆէնդիներն և ամիրանները հետեւելով ամբողջին, մտնում էին թատրոնական դահլիճը արհամարհական ժպիտը երեւին, ոչինչ հաւատալ չընծայելով հայ-թատրոնի ապագային: Բայց երբ օր ըստ օրէ թատրոնը սկսեց ստանալ հասարակական հիմնարկութեան նշանակութիւն, հասարակութիւնը, որի մէջ գտնվում էին մեր վաճառականների պէս հարուստ վաճառականներ, մեր չնոյնութիւնների պէս ազնուականներ և էֆէնդիք,— հասարակութիւնը սկսեց մտածել թատրոնի գոյութեան խնդրի վերա ու վերաբերելով հայոց թատրոնի գոյութեանը Համլէտի երեւելի հարցը՝ յիշել կամ չը լինէ՞, — Վառնը՝ լինի:

Նրբ թատրոնի գոյութեան խնդիրը վճռվեցաւ «լինի» խօսքով, այն ժամանակ Ս. Պոլսիցից կազմեցին խմբի, խօսացին, գրեցին, վիճաբանեցին և վերջապէս հիմնեցին դումար, շինեցին տուն թատրոնի համար, վարձեցին դերասանական խումբը... Վործը սկսվեց և գնում է մինչև այսօր:

II

Հետեւեք և մենք մեր համազգի պոլսեցոյ օրինակին:

Մենք էլ, ինչպէս ստացինք, սկսել ենք իրագործել հայ թատրոնի գաղափարը մեր մէջ մի և նոյն վերոյիշեալ ձևով: Ներկայումս թատրոնը համարեայ դարձել է հայ-հասարակութեան համար պահանջութիւն, որովհետեւ, ինչպէս յայտնի է ընթերցողին մեր նախընթաց յօդվածից, անպաշտպան, առանց գումարի, լոկ «հայ-թատրոն» անունով, նա այնու ամենայն օր ըստ օրէ քայլափոխում է դէպի առաջադիմութիւն, ուղղվելով իր անցեալ սխալները, զգուշանալով, որքան կարելի է, ապագայում էլ չը սխալվի: Թէ նիւթական, թէ արուեստական կողմից: Բայց դարձեալ այսքան տարուց յետոյ էլ մեր թատրոնի զրութիւնը անորոշ է:

Ուրեմն միթէ՞ մեղ էլ ժամանակ չէ հետեւի պոլսեցոյ գոյիլը օրինակին, և միթէ՞ ժամանակ չէ թատրոնի գոյութեան վերաբերութեամբ Համլէտի պէս հարցնել «լինի կամ չը լինի»...

III

Եթե՞ որ մենք փորը 'ի շատէ շոշափելի կերպով պարզեցինք հարցը, թողնենք մեր համամատութիւնները Ս. Պոլսի ազգայինների հետ, և խօսենք թէ ինչպէս կարելի է իրագործել մեր մէջ թատրոնի հիմնարկութիւնը և ապահովեցնել նրա գոյութեան սեւողութիւնը:

Թիֆլիսի բնակիչների համարեայ երրորդ մասը հայեր են, և այդ երրորդ մասի մէջ կը գտնվին ամենաբնիւ 200 կարողութեան տէր մարդիկ, այնպիսի մարդիկ, որոց համար կազմել մի ստորագրութիւն 15,000 բուրջի գումարը հաւաքելու համար, հիշտ բան է: Վերջոք թէ այդ 200 անձինքներից ոչ ամենքը համաձայնեցան մի օր և է գումար նուիրել թատրոնի հիմնարկութեան համար, բայց միթէ չեն գտնուի նրանց մէջ գնեւ 30 մարդ, որոնցից իւրաքանչիւրը 500-ական բուրջ տալով, կազմեն մի բաժանորդական ընկերութիւն: Եթե՞ թատրոնի թատրոն, շահ կը ստանայ իր առած անկեղծներից: Եթե՞ մեղացանք, տեսնելով որ գործը աջողվում է, հեղափոխեալ ժամանակ կը զրկվին յիշեալ անկեղծական ընկերութեան:

Ամեն նոր բան դժուար է ընդունվում մի կրկնում, որ ծանօթ չէ եւրօպական ժամանակակից կեանքի ընթացքին:

Ամբողջ Աւրօպայում այժմ ընդունված են թատրոնի բաժանորդական (սկիզբներին) ընկերութիւնները: Բայց որ մեզանում առ հասարակ բաժանորդական ընկերութիւնները նոր և անսովորական բան է, ապացոյց կարող է լինել և այն, որ անգամ բանկերի հիմնվելու ժամանակ մեր կապիտալիստները դժուարութեամբ էին զրաւում բաժանորդ զրկելով...:

Առաջարկելով վերջին անգամ իմ կարծիքներս վերաբերեալ հայ-թատրոնի կազմակերպութեան, ես կը սպասեմ մինչև նրա իրագործելը, այնքան, որքան որ կարելի է դիմանալ:

Մի և նոյն ժամանակ խոտանում եմ, հարկաւոր եղած միջոցին, առաջարկել տնտեսական պրոգրամմա թատրոնի համար:

Բայց առ այժմ դա աւելորդ է՝ երբ կը կազմվի գումար, կը մշակվի և պրոգրամմա:

Գ. ԶԱԿԻԱՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱՌՈՒՑ

Կովկասեան Կովտետէ հաստատեց Շամախեցոց և մերձակալ գիւղերի բնակչաց 1872 թ. յունվարի 16-ին պատահաց գետնաշարժութեան առթիւ 150 հազար բուրջ ստուգին փող (փոխառութիւն) բաժանել և Բարձրագոյն կանոնադրութեան 1 յօդուածին համաձայն, տեղացի հասարակութեան դասերից կազմել մի մասնաժողով, որ պէտք է բաժանի այդ 150 հազար բուրջ: Մասնաժողովը ունի իրաւունք մինչև 300-ական մանէթ այդ փողից իւր վճռով (3 յօդ. կանոնադ.) տալ վնասվածներին, իսկ գորանից աւել ցանկացողներին խնդրենք, այսինքն մինչև 500 մ., առաջարկել նախադապիտի վճատուութեան:

Կովմիսիան իրաւունք ունի 300 բուրջ տալ և անշարժ կայք գրաւ ընդունելով: Անշարժ կայքը զին են անում երկու երդուածները մի պօլիցական աստիճանաւորի և քաղաքային ճարտարագետի ներկայութեամբ: Սրբա գնահատական թուղթը առաջարկում են Կովմիսիային, որը նորան վերատուգելուց յետ, տալիս է վնասվածների կայքի գնահատեալ գումարի 2/3 և կամ 1/3 մասը (5 յօդ. կանոնադ.) փոխառական փողից: Կովմիսիան պարտաւորված է (9 յօդ. կանոնադ.) այդ փողից զվարճարապէս տալ այն քաղաքացոյց, (չեմ յիշում գիւղացիներին, որոնց մասին Կովմիսիան դեռ ես ապագայում պիտի, ինչպէս կարծիք հարկաւոր է, նիստ ունենայ) որոնք տեղափոխվելով այժմ աւելանք դարձած քաղաքի հիւսիսային, արեւելեան և հարաւային կողմերից, դէպի արեւմուտք, — մտադր են նոր բնակութիւններ յիշել Կովկասեան փոխարքայի անցեալ 1872 թ. յունիսի 26-ին հաստատած կարգադրութեան համապատասխան և որոնք չունին բաւականին սեպական կարողութիւն, որպէս զի կարողանան 300-ից մինչև 500 բուրջ մխելով կառուցանել կամ վերանորոգել իւրեանց յիւսիսները:

Կովմիսիան հրաւիրել է փող ստանալու ցանկաւ կացողներին խնդրենք տալ մինչև սեպտեմբեր ամսի 5, և ինքը մտադրի է տուած խնդրների համեմատ տալ 50 կտմ 60 մ. տուն ուղղելու կամ ի նորոյ կառուցանելու համար: Անպէս որ նա վրձնելով տալ իւրաքանչիւր խնդրողին 50 մ. ըստ իւր կարծեաց կօգնէ 3000 վնասվածներին խըրճիթները կառուցանել: Բայց պիտի նկատել որ ներկայ թանգութեան պատճառով մշակները ներկայ տարւում օրական մէկին երկու կամ երեք վարձ են պահանջում:

Սեպտ. 1878.

Ա. ՄԷԼԷՔ-ՇԱՀՆԱԳԱՐԻԱՆԵՐ

Պարոն Խմբագիր

Այս օրերումս ես կարդացի «Մոսկովսկի Վէստոմոստ» լրագրի 284 համարում՝ քաղուած «Մշակ» հայոց լրագրի մի թղթակցութիւն Թաւրիցի, որ հրատարակած էր 25-ին հոկտեմբերի:

Հաւատար խմբագրով այդ թղթակցութեան զըլխովին անվանականութիւնը՝ համարում եմ ստոր պարտաւորութիւն հաղորդել նախ՝ Միլլադայ-Իսուֆ-խանն չէ անձամբ անձին գնացել Ատորախան, այս յանձնարարութիւնը կատարել է նրա հաւատարեցալ անձն, և յանկարծ արժանաւոր և հետեղ պաղաւթերութեան պատճառով, գնած աւելւոր վաճառվել է անդ Ատորախանում առանց մի պուր անգամ Պարսկաստան հասցնելու: Երկրորդ Միլլադայ-Իսուֆ-խանն չէ պատժված այս











